

05 AUG 2018



891-99  
24-75

891.5  
4102.1  
1/2 9W

Յ. ԿՈՍՏԱՆԴԻՆԱՆ

# ՕՐԵՐԻ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ



Փ Ա Ր Ի Ջ  
1935

23 MAY 2013

36477

Հայաստանի Հանրապետության  
 Կրթության, գիտության և սպորտի նախարարության  
 ՀՀ կառավարության հրամանագրով  
 15/3/84 թ. ֆոնդային  
 Գրառված է 15/3/84 թ. ֆոնդային  
 Գրառված է 15/3/84 թ. ֆոնդային

ՕՐԵՐԻ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ

ՀՀ կառավարության  
 հրամանագրով  
 1959 թ. ֆոնդային  
 Գրառված է 1959 թ. ֆոնդային



3911-2011

ԱՅՍ ԳՐԱԳՈՅՎԸ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ

ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ

**Պրն. ՄԱՐՏԻԿ ՏԱԿԱՌԵԱՆԻ**

Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՐ ՀՕՐ՝

**ՕՀԱՆ ՏԱԿԱՌԵԱՆԻ**


ԵՒ ՅԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԻՐ ՄՕՐ՝

**ՄԱՐԻԱՄ ՏԱԿԱՌԵԱՆԻ**

Գրքոյկը, որ կը հրատարակենք, լուսատիպ օրինակն է Յարութ Կոստանդեանի «Օրերի իմաստութիւնը» գործին, ինչպէս առաջին էջի ձօնագրութենէն կը պարզուի, նկարիչ Մելքոն Քէպապճեան զայն կազմած, զարդանկարած եւ նւիրած է նոյն ինքն հեղինակին: Այս հրատարակութեամբ ուզեցինք ձեր եւս սեփականութիւնը դարձնել միակ, թանկարժէք այս օրինակը:

Մելքոն Քէպապճեան ծնած է 1890-ին, Ակն: 1892-ին փոխադրուած է Պոլիս, ուր ինքնաշխատութեամբ զարգացուցած է նկարչական իր ձիրքերը: 1918-ին հաստատուած է Փարիզ, հոն գործած եւ տուած է նկարչական առանձին ցուցահանդէսներ: Յայտնի է նաեւ իբրեւ զարդանկարիչ: Նկարազարդած է Ծուշանեանի գործերը, «Ամէնուն տարեցոյց» ը, «Անահիտ» ը եւ այլն: 1947-ին ներգաղթած է Հայաստան, եւ նուէր տարած Երեւանի Պետական Պատկերասրահին իր բոլոր գործերը: Մեռած է Երեւան, 3 Մարտ 1949-ին:

**ՄԱՏԵՆԱՇԱՐ ԱՐԳ**



**Ի**ՈՇԱՆՆԵՍ, իւրաքանչիւր իմաստութիւն իր  
օրն ունի, եւ իւրաքանչիւր օր իր իմաստու-  
թիւնը: Իւրաքանչիւր կեանք մի քանի օր ունի  
ապրելու, սակայն օրը միայն մի կեանք ունի:

Ու այն օրը որ անցաւ, աշխարհը նրա  
նմանը այլեւս չէ տեսնելու:

Օրերը նման են պողոտայից անցնող ամբո-  
խին, շատերը իրար են նմանում, սակայն նրան-  
ցից իւրաքանչիւրը ունի իր անհատական կեան-  
քը, յատուկ ներաշխարհը, երազներն ու խոր-  
հուրդը:

Նոհաննէ՛ս, մի ասել, — այս օրը դատարկ  
էր, եւ ունայն անցաւ: Որովհետեւ դատարկ էր  
հոգիդ, եւ ո՞ւր կը թափես գինին եթէ բաժակը  
լեցուն է արդէն ...:

Կան օրեր երբ կեանքը՝ հեքեթական ծառի  
պէս ծաղկում է մի քանի վայրկեանում, թափ-

ւում են թերթերը ծաղիկների, հասունանում է միրգը անուշահամ, ու կախարդում քիմքը ամամահական բոյրերով ...

Եւ կան օրեր երբ դեղնում են տերեւները ծառերի, ու անկեանք վար թափւում՝ հնադարեան իմաստունի առակների պէս ...

Եւ դեռ կան օրեր՝ երբ անձրեւը որպէս մի մահերգ, թախծագին ու դանդաղ իջնում է հողու խորքերը ու կեանքի դեղեցկութիւնը քողարկում:

Եոհաննէ՛ս, մի՛ սպասեր որ դարնան բիւրեղեայ ու արեւադարձ օրերը դան, եւ ճաշակես թաւշամորթ ու սիրատենդ միրգերը հեշտանքի:

Եթէ ծառը ծաղկած է, եթէ ծիծեռնակը իր բոյնն է շինում, ի՞նչ փոյթ որ դեռ հեռու է դարունը...:

Եւ դեռ կան օրեր, երբ բոլորը իրար հետ շաղկապուելով ստեղծում են միակ, անբաժանելի ու աստուածային մի ներդաշնակութիւն:

Այսպէս են սիրոյ օրերը. երբ օրերի ու սիրոյ իմաստութիւնն ու հեշտանքը շփոթւում, նոյնանում են իրար հետ:

Այն ժամանակ, Եոհաննէ՛ս, մի՛ փորձեր դատել օրերը քո հաճոյքից, բայց եւ մի՛ շփոթեր օրերի իմաստութիւնը քո սիրոյ հետ:

Որովհետեւ իւրաքանչիւր իմաստութիւն իր օրն ունի, եւ իւրաքանչիւր օր՝ իր իմաստութիւնը:

\*\*

Այսօր երբ դրիչս ձեռք առնելով, սկսեցի այս թուղթի անբիծ մաքրութիւնը արատաւորել, կրկին անգամ յիշեցի քո խօսքերը.

— Բա՛ւ է որքան զգայութիւններովդ փորձեցիր կեանք ու շունչ տալ անզգայ թուղթին. բաւ է որ ճգնեցիր թուղթի վրայ ստեղծել միտքեր, ու քո հերթին դառնալ ստեղծադործութիւնը մտքերիդ...:

Թո՛ղ հիմա դրիչն անդօրութեան, մտի՛ր կեանքի մէջ, մօտեցիր քո նմաններին, ու դրիւր նրանց սրտերի բարախուն մազաղաթին վրայ, անգամ եթէ ստիպուած լինես գրչի փոխարէն դաշոյն դործածել... այն ժամանակ միայն գրածիդ արժէքը կը գիտենաս...

Այսպէս խօսեցար դու, եղբայր իմ Եոհաննէս, ու ես ականջալուր եղայ քո խօսքերին ու կատարեցի որպէս առաջին պատգամը հեթանոս աստուծոյ:

Ես մտայ կեանքի մէջ, մօտեցայ իմ նմաններին, ու նրանք մօտեցան ինձ: Ու ես փնտոեցի նրանց սրտերը, ու չզտայ:

Եւ, ո՛վ իմաստուն Եոհաննէս, նրանք էին որ սրտիս մագաղաթին վրայ գրեցին. գրեցին, սակայն առանց երբեք գիտնալու որ մի օր իրենց գրածը՝ իրենք կը կարդային...:

Եւ նրանցից ոչ մէկը դաշոյն գործածելու քաջութիւնը ունեցաւ:

Հիմա, ես նորէն գրում եմ Թուղթի վրայ:

\*  
\*\*

Յիշում եմ այն օրը, Եոհաննէս, երբ Արամայիս ու Արտաւազդէ այցի եկան մեղ: Ու մենք յակնթագոյն բաժակների մէջ գինի խմեցինք:

Ու գինին, ծիածանով շրջանակուած վարդագոյն մշուշի պէս, բարձրացաւ մեր հոգիների անհունին մէջ:

Ու Արամայիս, որ բանաստեղծ է, ասեց.

— Խօսենք հիմա, ու թող, վարդերի պէս պերճ ու հեշտաբոյր, բառերը ծաղկեն մեր շրթունքների վրայ: Որովհետեւ, այն շրթները որ օծւում են ազնիւ գինով, գոհարիկ խօսքերով պէտք չէ պղծել: Ու աւելացրեց.

— Երբ որ մեռնեմ, ու գեհենի բոցերի մէջ մարմնիս վերմակովը մի պերճաղիճի մերկութիւնը ծածկեմ, աշխարհային կեանքի միակ

բանը որ պիտի ափսոսամ, կը լինեն այն օրերը — երբ ես գինով արբեցայ: Որովհետեւ ի՞նչ է կեանքը, — մի զոյգ գեղեցիկ աչեր, մի ժպիտ, երազ, յետոյ յաւիտենական նիրհը — որ գեհենի բոցերից է՛լ աւելի սոսկալի է:

Ու Արտաւազդէ, որ փիլիսոփայ է, ասեց.

— Կեանքը գեղեցիկ եւ իմաստուն լինելով է ճշմարիտ:

Ու մահը ճշմարիտ լինելով է գեղեցիկ եւ իմաստուն:

Ու ես երգեցի.

— Ո՛վ չէ սիրել անհուն սիրով — գէթ մի անգամ.

— Ո՛վ չէ արբել յակնթ գինով — գէթ մի անգամ.

— Ո՛վ չէ խաբւել կն.ջ ձեռքով — գէթ մի անգամ.

Նա չէ ապրել, այլ մեռել է — հազար անգամ...:

Իսկ դու, Եոհաննէ՛ս, դու լուռ մնացիր:

Յիշում եմ այն օրը երբ Արամայիս եւ Արտաւազդէ այցի եկան մեղ, որովհետեւ այն օրը, Եոհաննէ՛ս, դու լուռ մնացիր:

\*\*

Եռհաննէ՛ս, զիտեմ թէ ինչ ես փնտուում  
անցեալի անապատների մէջ:

Փնտուածդ զերեզմանն է քո սիրոյ:

Կ'ուզես բանալ զերեզմանը, տենչում ես  
վերստին նայել անցեալի վրայ եւ արսոսալ:  
Աւա՛ղ, նա այժմ կմախքացած է եւ այլեւս  
չունի իր վաղեմի գեղեցկութիւնը:

Գիտեմ, սակայն, որ քո երեւակայութիւնը  
տեսողութիւնդ կախարդելով կը լրացնէ պա-  
կասը:

Փորէ՛, փորէ՛ զերեզմանը, մինչեւ որ ան-  
դունդ բանաս քո առջեւ... բայց փնտուածդ  
յաւիտեան աներեւոյթ կը մնայ:

Որովհետեւ փոշիացած է կմախքը:

Եռհաննէ՛ս, եղբա՛յր իմ, հիմա ունին դիր  
խօսքերիս, որովհետեւ նպատակս քեզ բան սո-  
վորեցնել չէ, այլ շատ բաներ մոռացնել տալ:

Որովհետեւ նա, որ քայլում է դէպի ծաղոզ  
արեւը, դէպի լոյս ու ճշմարտութիւն, նրա  
ստուերը, նրա անցեալը հետեւում է նրան:

Իսկ նա, որ թիկունքը դարձրած է դէպի  
այգը՝ հեռանում է ոսկեզօծ շառայներից, նրա

ստուերը՝ նրա անցեալն է առաջնորդում նրան:  
Բայց ես ինչպէ՛ս չասեմ՝ քեզ, որ մարդու  
հոգի՛ն է իր անցեալը:

\*\*

Եռհաննէ՛ս, կան օրեր, երբ մարդկութիւնը  
իմ ամենասոսկալի թշնամին է դառնում:

Երբ դիտեմ որ ձեռքերս շղթայւում են, ու  
մարմինս կքում է մի անտանելի ծանրութեան  
տակ:

Եւ հոգիս բանտարկած է մի խուցի մէջ,  
որի պատերը հայելիներ են:

Հայելիների անհունութեան մէջ բազմա-  
պատկւում է հոգիս ու ահա ինձ նմանող ան-  
թիւ էակներ շարժւում են, տառապում, լալիս  
ու ծիծաղում՝ ինձ նման:

Ու թւում է ինձ որ հայելիները պատկերա-  
ցնելով հոգուս անդօր ցասումն ու տառապան-  
քը, իմ իսկ պատկերովս են ծաղրում ինձ...:

Այն ժամանակ յուզումի մրրիկն է շառա-  
չում գանկիս մէջ:

Մի ճնշող ու հեղձուցիչ զոլորչի բարձրա-  
նում է կուրծքիս տակ: Ցաւազին աղաղակելու,

սրտիս մէջ կուտակւած թոյնն ու ատելութիւնը մի սղբածայն ու ահարկու ոռնոցով արտաշնչելու տենչանքն եմ ունենում :

Եոհաննէ՛ս, ազատելու համար այս անպատում տանջանքից, հեռանում եմ այն վայրերից ուր մարդիկ իրենց առօրեայ կեանքն են ապրում . հեռանում եմ դէպի դաշտ, դէպի լեռ ու անտառ, ուր բնութիւնը իր խիստ նայածքով լռեցնում է այն ամէնը որ արուեստական է հոգուս մէջ :

Եւ աղբիւրի ջինջ հայելին, որի մաքրութիւնը այնքան դիւրին է պղծել, ինձ ցուցնում է որ ես՝ ես եմ . . . :

Սակայն կան օրեր, երբ բոլոր էութեամբս ատում եմ ինձ . ատում մտքերիս անհանդուրժելի տիրապետութիւնը կեանքիս վրայ, ատում իմ ներկայութիւնս իմ մէջ :

Եոհաննէ՛ս, մարդկանց իշխանութիւնից ազատելու համար, հեռանում եմ դէպի դաշտ, դէպի լեռ ու անտառ :

Բայց ասա՛, դու որ իմաստուն ես, ես ինչպէ՞ս հեռանամ ինձանից, եւ ո՞ւր երթամ . . . :

\*

\*\*

3941-2011

Եոհաննէ՛ս, ի՞նչ զով են ու զուլալ երազանքի աղբիւրները :

Ամառայ կիզիչ սոթին քանի անգամներ ենք եկել ու նրանց զուլալ ու պաղ ջուրերով զովացել . . .

Քանի՛ անգամներ ենք եկել ու նրանց յստակ ջուրերի մէջ մեր հոգիների աղտեղութիւնը մաքրել, ու յետոյ, դալար խոտերի, խատուտիկ ծաղիկների վրայ ընկողմանած (աղբիւրների մօտ ծաղիկները սիրամարգի փետուրների պէս բազմերանգ են ու փափուկ) ունկնդրել զարմանահրաշ հեքեաթին :

Ի՞նչ ցնծութիւն ու հեշտանք, Եոհաննէ՛ս, արեւակէզ ու փոշոտ ճամբաներով հասնել երազանքի աղբիւրին ու սրտի տասլը զովացնել . . .

Ես տեսայ դաշտի աղբիւրը որ խաղաղ կարկաչելով անցնում էր վերի ամպերի հետ ամպերի պէս ծիլ ու ծաղիկ համբուրելով :

Ու գիշերը լուսինը վար նայելով զարմանում էր, աղբիւրի յստակ ու ջինջ հայելու մէջ՝ տիեզերքի դանձն ու անհունութիւնը տեսնելով . . .


Ու ես տեսայ այն աղբիւրը, որ սարի դադաթից, ուրախ կարկաչելով հազար ու մի խա-



ղերով, իջնում էր դէպի դաշտ, ու թագնւում  
ծաղիկների վերմակի տակ:

Հիմա ձմեռ է, Յոհաննէս, բուքն ու բորա-  
նը սուլում են ձիւնապատ լեռների, սառած  
դաշտերի վրայ, ու ճամբորդը իր տնակը քաշ-  
ած, կրակով է ջերմացնում իր մարմինն ու հո-  
գին...

Յոհաննէս, ե՞րբ պիտի դայ դարունը.  
ե՞րբ պիտի հալեն ձիւնն ու սառոյցը, որ նորից  
հոսեն ուրախ կարկաչելով, հազար ու մի խա-  
ղերով, լուսնեակի շողերի պէս, հովերի համ-  
բոյրի պէս, հոսեն, հոսե՛ն աղբիւրները երա-  
զանքի...:



ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ԱՌՋԵԻ

Անձրեւն իջնում է հեղուկ երգի պէս,  
Դուռ դամբանիդ բախելով ի գուր,  
Սակայն յուսալով գուցէ ինձ լըսես՝  
Ահա՛ եկել եմ, երկիւղած ու լուռ :

\* \* \*

Վարպե՛տ, այս ես եմ, անանուն մի ես,  
Հոգիս վաճառած գրքիդ մէկ էջին,  
Դու որ նիրհում ես, բա՛ց աչքերդ ու տես,  
Քանզի մարմնացած քո երգն եմ վերջին ...

\* \* \*

Իջնում է անձրեւն այտերիս վըրայ. —  
Արցունք է արդեօք, քե՛՛ միայն անձրեւ.  
Անձրեւ կամ արցունք նոյնն է հիմա՝  
Հանգչում է մահը այս քարի ներքեւ ...

\* \* \*

Վարպե՛տ, այս ես եմ, անանուն մի ես,  
Եկած սեւ կաւովդ արձան կերտելու ...  
Ա՛հ, ես անհուն եմ, իսկ դու ննջում ես,  
Վարպե՛տ, եկել եմ վիճակ փոխելու ...:



### ԱՐԵՎԵԼԵԱՆ ԳՈՐԳ

Սենեակս մուժ է ու օդը սպառուած: Լոյս չկայ, օդ չկայ:

Արեւի մի նիհար, հիւանդ ու մրսկոտ ճառագայթ շողում է պատուհանի միջից եւ ժանեակէ վարագոյրի ստուերահիւս ընդօրինակութիւնը ձգում գորգիս վրայ:

Գորգս կապոյտ է. վրան սակայն գոյնզգոյն ծառեր, ծաղիկներ ու թռչուններ կան նկարուած:

— Ո՛վ գիտէ Արեւելքի ո՞ր քաղաքում հիւսեցին քեզ, ու հիմա դու Փարիզում սենեակս ես դարդարում:

Հէ՛յ Արեւելքի գորգ, դու էլ ինձ պէս օտար ես այստեղ: Քեզ էլ են անարգել, փռել են կոշտ գետնի վրայ ու փոշոտ ստեբեր կոխտում են երեսդ:

Արեւելքի գորգ, եթէ մեր երկիրը լինէինք՝

ես քեզ զուարթ պարտէզի մէջ կը սփռէի, կանանչ ու դալար խոտերի վրայ, ծառերի զով շուքին տակ, կարկաչուն աղբիւրի մօտ:

Ու կօշիկներս հանելով, ծալլա գատիկ կը նստէի վրադ ու կ'երազէի:

Սամօվարը կ'եռար մեր կողքին, միրգեր կը թափուէին մեր շուրջը ու սոխակներ կ'երգէին ծառերի վրայ:

Ու դու, այն հէքեաթական գորգի պէս կը սլանայիր դէպի երազային աշխարհներ՝ ուր մենք Սայեամի հետ գինի կ'ըմպէինք ու դէրվիչների հետ հաշիչ կը ծխէինք:

Հէ՛յ, հէ՛յ Արեւելքի գորգ...

Արեւի մի նիհար, հիւանդ ու մրսկոտ ճառագայթ շողում է պատուհանիս միջից՝ գորգիս վրայ:

Եւ ահա այն թիթեռանման ծաղիկները կարծես թէ մի խոր քնից արթնանում են, ծաղկում եւ բուրում...

Սատուտիկ թռչունները կեանք են առնում ու դայլայլում:

Ծառերը աճում, բարձրանում են սենեակիս մէջ, ծածկելով առաստաղը սաղարթախիտ ճիւղերով:

## ԳԻՆԱՐԲՈՒՔ

...Ու տուր ինձ մի բաժակ գինի,  
Ուր թափել է արեւն իր հուր,  
Նախ քան օրը գիշեր լինի —  
Ե՛կ, սիրուհի՛ս, բաժակը տուր :

\* \* \*


Նուռ պրիսմակովը բաժակի՛  
Գեղեցկութեանդ ցուֆը դիտեմ,  
Նըմանի դէմքդ հրեշտակի,  
Սատանայ ես թէեւ, գիտեմ :

\* \* \*

Ե՛կ, սիրուհիս, լեցո՛ւր բաժակն .  
Շրթներիդ վարդն օժէ ցողով ,  
Ու շրթներիդ համբոյրի ակն  
Թող ֆաղցրանայ նաեւ գինով ...

\* \* \*

Համբոյրդ լինի թող գինեհամ,  
Արժանանա՛մ մե՛նք գեհե՛նին ...  
Բայց համբոյրովդ թէ չարքե՛նամ՝  
Զըմեղադրես ազնիւ գինին :



## ԱՅՍ Է ԻՄ ՏՈՒՆ ...

Մըթին ու նեղ սանդուխներով՝ ուրբ յարկեր երբ բարձրանամ ,  
Նրբանցքներով նեղ ու մըթին շէնքի սրտումն երբ խորանամ ,  
Ես կը խորհեմ, սենեակիս դուռն հազիւ բացած ,  
— Այս է իմ տուն, իմ հայրենիք, ա՛յս է բոլոր իմ ունեցած ...

Արեւելից հետըս եկած մաշուած մի գորգ,  
Գոյնը նետած, վըտիտ ու մերկ, կարծես մի որբ,  
Խօսում է մերթ յիշեցնելով ճայնովն իր ցած՝  
— Այս է իմ տուն, իմ հայրենիք, ա՛յս է բոլոր իմ ունեցած ...

Պատից կախուած նըրա պատկերն գեղեցկադէմ,  
Փայլում է մերթ յիշատակով ֆաղցր ու վըսեմ:  
Սիրում էր Նա, սակայն վաղո՛ւց է մոռացած,  
— Այս է իմ տուն, իմ հայրենիք, ա՛յս է բոլոր իմ ունեցած ...

Գրֆակալում գրֆերի հոծ ամբոխը լռ՛ւո ,  
Պատմել է ինձ իմաստութիւն, հեֆեաթ, ի գո՛ւր ...  
Քանզի գիտեմ՝ նըրանց խորհուրդն ես գոց սորված՝  
— Այս է իմ տուն, իմ հայրենիք, այս է բոլոր իմ ունեցած ...

Ու ֆարտէրը հայաստանի — ծովի՛ց ի ծով —  
Դէմս է փըռում խոցուած սրտին թոյնն ու գորով ...  
Սակայն մտֆումս ֆարտէսն հազար մասի պատռած՝  
Որոնում եմ մի հայրենիք, ուր մարդը չէ մարդից ատուած ...

## ՀՈՂ

Հո՛ղ՝  
արգանդ, գերեզման  
ու նորից արգանդ :  
Ուր ապրել եմ ես  
երկար տարիներ՝  
առաջ ֆան ծնուելս :  
Ուր, երբ որ մեռնիմ,  
նորէն պիտ՝ ապրիմ  
երկար տարիներ՝  
առաջ ֆան ծնուելս ...

Հո՛ղ՝  
արգանդ, գերեզման  
ու նորից արգանդ :  
Քեզմով է շինուած  
տանարս աննըման,  
ու երբ նա փուլ գայ,  
ֆեզմով պիտ՝ ծեփեն  
պատերը նըրա .  
որ կրկին անգամ  
դէպ՝ վեր բարձրանայ :

Հո՛ղ՝  
արգանդ, գերեզման  
ու նորի՛ց արգանդ,  
Հո՛ղ ... :

ԵՐԱԶ

Առ Տ. Մ.

Մի կորսրած հիւզ կիսաներ՝  
Ծածկեր մեր սէրն ու մեհուքիւն,  
Ոսկերիւրեղ վերից աստղեր  
Վար թափէին ցող, օրհնութիւն :

×

Այսպէս մեհակ ու մոռացուած,  
Ու մոռացած աշխարհը սին,  
Լոյսերի պէս իբար գրկած՝  
Զուլուէի՛նք ջինջ արշալոյսին ...

×

Բայց ինձանից հեռո՛ւ ես դու,  
Ինձ աւելի մօտ է լուսինն ...  
Լինես սակայն մօտ թէ հեռու՝  
Նոյնն է վախճանն այս երազին :

ՈՒԺ

Թող երգեն նըրանք՝  
Երգերը հիւանդ  
Սիրոյ ու վարդի ...  
Կ'երգեմ ես միայն  
Իմ երգը ուժի :  
Էլ ո՛վ է ուզում  
Մի ատլաս լինել  
Ու մէջքի վըրայ  
Աշխարհը կըրել,  
Տիեզերք լինել,  
Աշխարհն իր ափում  
Որպէս խաղալիք :  
Մի թեթեւ շունչով  
Աստղերը ցրուել,  
Արեւը մարել,  
Լուսինը վառել,  
Տիեզերք լինել ...:

Երգըս որպէս աղամանդէ  
Մի մուրակ,  
Տիեզերքում կ'երթա՛յ, կ'երթա՛յ,  
Եւ ամէն տեղ իր հետքը կայ՝  
Ինքը չկայ :

## ԵՐԱԶԱՆՔ

Երագանքիս բիրեղին մէջ քեզ տեսայ,  
Մայրամուտի գեղեցկութեան պէս թախծոտ,  
Անցա՛ր վարսերըդ ոսկի, ու աչքերըդ շափիւղայ,  
Անցա՛ւ երագն ու հիմա հոգիս տեսի՛ղ է կարօտ :

×

Յովագի պերն, յայլ քայլերովդ հեշտօրօր, —  
Անցաւ մարմինդ մի ծաղկագարդ նախ պէս,  
Առագաստներն ուռած, — ստինքդ էին որ բոլոր  
Հովերն եկան փայփայել . . . Ու չըհասայ բընաւ քեզ . . . :

×

Բայց գալըստեանդ ես կը հըսկեմ վերըստին, —  
Ե՛կ դիցունիս, — դարձուր գիշերս առաւօտ . . . :  
Ինչպէս արտոյտն ընդառաջ կ'երթայ ծագող արեւին՝  
Երգում եմ քեզ, մինչ յաւէտ սիրտըս սրտիդ է կարօտ :



ՔԱՌՍ

Հասել եմ ես վերջապէս  
Ափերն անափ լըռութեան,  
Հեռուն թողած սոխակի երգն,  
Անմիտ ժըխտը մարդկութեան :

Եւ ոչինչ կայ ոչընչութեան այս ափերում,  
Դատարկութիւն, վե՛րը, վա՛րը,  
Դատարկութիւն իմ սրտում .  
Լըռութիւնը պատել է ինձ՝

Ինչպէս մըշուշ աներեւոյթ,  
Բայց գանկիս մէջ շըշընչում է  
Լուռ մեղեդին. յուշերիս,

Ու մերթ ընդ մերթ ինչպէս փարօս  
Մտքիս լուսաստղն է փայլփըլում  
Ծովին վըրայ քառսի :

\*\*

Փակեմ աչքերս ու սպասեմ  
Յիշողութեան հեշտանքին —  
Սիրուած դէմքը բող ժպտի ինձ  
Քաղցրը ժպտովն իր վաղեմի,  
Պչրոտ ու հեշտ ժամն ինձ դառնայ  
Մոռացութեան մութ վիհից .  
Եւ համոյքի վայրկեանը բող որ նորից  
Իր հըրեղէն մտրակով  
Ցնցէ մարմինս ու հոգիս :

\*\*

Բայց ո՛չ մի աստղ , ո՛չ մի պատկեր ու ժրպիտ :

\*

\*\*

Ո՛վ աստուածներ քառսի,  
Մըտածմունքի մըքի՛ն ու լո՛ւտ անդունդներ .  
Ահա հոգիս , անհուն քառս , ձեզ նըւէր :  
Որովհետեւ խաւարեցաւ արեգակի բոցն ահեղ ,  
Անհետ կորաւ այս աշխարհն ,  
Անհիմն , անեզր տիեզերքում ,  
Փռշիացած դիակն ինչպէս  
Գերեզմանի լուռ գրկում :

## ԳՈՐԾԱՐԱՆԸ

Հըսկաների երկրից փախած մի ուրուական ...  
Խաւարի մէջ , խաւարից սեւ , կանգնած է նա ,  
Հըսկաների երկրից փախած մի ուրուական ...  
Վաղո՛ւց է լըռել մեքենաների գառանցանքը խօլ ,  
Վաղո՛ւց են մարել կայծերն հընոցի ,  
Որ կը փայլին արդ , թախծոտ աչքերում  
Բիւր բանուորների ...  
Վաղո՛ւց են մարել կայծերն հընոցի :  
Երկինք բարձրացող հըսկայ ծըխանից՝  
Վաղո՛ւց համարձեց վերջին ումպ ծուխը .  
Հիմա խաւարի գորշ ծուխն է պատել  
Երկինք բարձրացող հըսկայ ծըխանին :

Մեքենաները՝ բանուորների պէս  
Յոգնած ու թախծոտ —  
Հանգիստ են առնում, իրար գրուցում ...  
Ու միւս առաւօտ կը գործեն նորէն,  
Բանուորների պէս՝ յոգնած ու թախծոտ,  
Կը գործեն նորէն, կը գործեն անվե՛րջ,  
Բայց երբ որ մաշուեն, դուրս չեն շրայրուել՝  
Բանուորների պէս, յոգնած ու թախծոտ :

## ԵՐԳԸ

Երկար օրեր լուռ մընացի,  
Որ կարենամ այսօր խօսել —  
Քանզի խօսքը նըման հացի,  
Զրկուած սրտով պիտ' ընդունել ...:

\*

Ահա երգըս, սըրտէս բըլսած —  
Որպէս ջուրը իր մութ ակից,  
Ըսպասում է որ մի յոգնած  
Սիրտ գովացնէ օրուայ տապից ...:

\*

Բայց դիմացըդ գինու բաժակն,  
Լի խաղողի ազնիւ հիւթով,  
Ներշնչումի գսպուած լըճակ,  
Ալեկոծում է գայրոյթով ...:

\*

Գիտեմ այս վարդ բաժակի մէջ,  
Մի օր գինին կ'առնէ լեզու,  
Որպէս մի հին մատեանի էջ —  
Կեանքի հէֆեաթը պատմելու ...:

\*

Այն է երգը որ կ'արբեցնէ,  
Երգը ա՛յն է որ սէր կը տայ,  
Մինչ հոգուդ մէջ ֆանի՛ր երգեր  
Կեանքիս թախիժ ու մուգ կը տան ...:

\*

Ահա երգըս՝ սիրոյ նըման,  
Մերթ խանդավառ ու միշտ տըխուր,  
Որպէս կեանքի անյայտ նամբան  
Տանում է ինձ — ո՛վ գիտէ ո՞ւր ...:



**ՏՐՏՈՒՆՁԻ ԱՌ ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄ**

Խայեա՛մ, ինչպէս քեզ չանիծեմ,  
Այս վարդ բաժակն երբոր դիտեմ.  
Ըսպատել ես երգը գինու  
Էլ ի՞նչ մընաց ինձ երգելու:  
Ուրեմըն թող ըմպեմ գինին՝  
Մէկ քն կեանքն ու մէկ էլ իմ ...

\*\*

Զէ՛, բարեկամ, չէ՛ այստեղի  
Գինին կարծես ֆացախ լինի.  
Հէ՛յ, Շիրազի պարտէզն՝ եդեմ,  
Վարդն ու բաժակ շրթներես դէմ,  
Սիրո՛վ, տաղո՛վ, ըմպեմ գինին,  
Մէկ քն կեանքն ու մէկ էլ իմ :

\*  
\*\*

Հոգիս՝ սլացող մի նետի պէս՝  
Անհունդ ի վեր է բարձրացել՝  
Եւ իր թռիչքի գագաթն հասած՝  
Դէպ՝ վար նետուել . . . :

Լարեմ նորից մտփիս աղեղն,  
Ես որսորդ եմ երազների . . .  
Դո՛ւ օգնիր ինձ, մեծդ ինդրա:  
Շարժի՛ր հովերն անհունդի մէջ,  
Մրրիկներդ անսանձ արա՛,  
Թող սլանայ նետըս հեռո՛ւն . . .  
Մինչեւ երազ ու նիրվանա՛ . . . :

Հոգիս՝ սլացող մի նետի պէս՝  
Անհունն ի վեր է բարձրանում,  
Եւ իր թռիչքի գագաթն հասած՝  
Դէպ՝ վար նետում:

ՃՇՄԱՐԻ՛Տ, ՃՇՄԱՐԻՏ ԱՍՈՒՄ ԵՄ ՔԵԶ . . .

Այսօր, մարմինս ոչ ստուեր ունի, ոչ հոգի  
Ոչ շղթայ ծանր, եւ ոչ էլ թէւ լուսեղէն,  
Կէս սովամահ մի գայլի պէս՝  
Դունչը մեկնած աներեւոյթ լուսնեակին . . .  
Ոռնում է ցաւն իր ապրելու,  
Տենչանքն անգուսպ պատառելու, լափելու  
Տափուկ արիւնն եղնիկին՝ դեռ կենդանի . . . :  
Բայց պատասխանն իր ռոնոցին  
Ոռնոց է գի՛լ, արձագանգ .  
Եւ յուսահատ, հերոսական վայրի կամփով՝  
Թաքն է փշրում ժանիֆներով իր սրածայր,  
Լափում արիւնն իր սրտի . . . :  
Այսօր մարմինս ոչ ստուեր ունի, ոչ հոգի . . . :

Ե Ր Յ . . .

*Առ Տ. Մ.*

Երբ որ սիրոյ մոգական կանթեղին իւղն է հատել,  
Երբ սեւացած պատրոյզի մարել է կայծը վերջին՝  
Զո՛ւր մի նգնել սիրելու, թէ անկարող ես ատել, —  
Արձանագրէ « յաղբւեցի » կեանքիդ գրքի մէկ էջին :

ՄԱՀՈՒԱՆ ՄԵՂԵԴԻՆ

Արթնանում է գիշերն ահա,  
Յօրանջելով մութ վիհի պէս,  
(Մի գով գեփիւռ փըչեց անցաւ՝  
Թիթեռնիկի ըստուերի պէս . . .)  
Վերն ամպերի մուգ ֆարավան,  
Շարուէ-շարան, շարուէ-շարան,  
Քայլում է դէպ՝ ո՞ր հանգրբում —  
Այսպէս լըռին, շարուէ շարան . . .  
Տիեզերքի թախծոտ գրկում,  
Լուսինը մերթ, Աստծոյ հոգին,  
Ո՞ւմ ճամբան է լուսաւորում՝  
Պատռելով կուրծքը ֆառսին . . .:

\*  
\*\*

Անցէ՛ք միտքեր, անցէ՛ք խոհեր,  
Ամպերի հետ շարուէ - շարա՛ն.  
Հոգիս՝ ֆառս, միտքս՝ գիշեր,  
Գեհե՞նն է այս թէ ֆաւարան . . .:



Ժ

### ՋՄՐԱՆ ԳԻՇԵՐ

Այս գիշեր, ձմրան ցուրտ գիշեր է: Դուրսը քամին ձիւնը աւլում ու պատերին է ծեփում: Դուրսը ձմրան ցուրտ գիշեր է: Բայց սենեակումս տաք կրակ կայ, մի հանգիստ թիկնաթոռ կայ, Խէչօն - շունս ու ես:

Պատէն կախուած ժամացոյցը ինձ ասում է որ ժամի տասն է. երբ տասներկուսը լրանայ, տարին կը նորանայ. հինը կ'երթայ նորը կը գայ:

Նստած եմ կրակի մօտ եւ իւզոտ ճրագի թախծոտ լոյսով երազում եմ:

Խէչօն էլ, գլուխը թաթերին՝ պոչը հանդարտ շարժելով, կիսախուփ աչքերով կրակին է նայում: Նա՛ էլ է երազում. կարծես յիշում է մի ինչ որ ուրախ դէպք, կարծես ասում է — հէ՛յ օրեր...

Ես էլ անցած օրերը յիշում եմ. ես էլ եթէ պօչ ունենայի, հանդարտ կը շարժէի, ասելու համար, — հէ՛յ օրեր...

Քամին շարունակում է դրսում իր բազմալար ողբը. նրա հետ, շրխկ-շրխկ, հեծկըլ-տում է պատուհանս: Պատէն կախուած ժամացոյցը՝ թիկ-թակ, մտքերիս հետ չափ է պահում, թիկ թակ... Կրակի բոցերն ոչնչութիւնից դուրս դալով, ոչնչութեան մէջ են անհետանում... Ու դուրսը քամին ողբում է:

Բայց յանկարծ այս ձայներից վեր լսում է մի ուրիշ ձայն, թրխկ-թրխկ. պատուհանս են ծեծում:

Մի հի՞ւր է արդեօք, թէ կարկուտ է դալիս: Թրխկ-թրխկ, աւելի ուժովն այս անգամ: Այս ուլ որ է, շատ անհամբեր մէկն է: Ու թողնելով հանգիստ թիկնաթոռս, մօտենում եմ պատուհանին ու ակամայ հարցնում. — Ո՞վ է: Ոչ մի պատասխան:

Բացի քամու ունոցից, ուրիշ ոչինչ չի լսում: Սակայն հաղիւ թէ վերադառնում եմ տեղս, ահա վերստին թրխկ-թրխկ, նոյն տարօրինակ բախումը ցատկել է տալիս ինձ ու մղում դէպի պատուհանը:

Այս անգամ «Ո՞վ է» այնքան բարձր եմ բըղաւում, որ ինքս էլ վախենում եմ ու սկսում դողալ, երբ մի ձայն քամու ողբի միջից ասում է.

— Ես եմ, մի յոզնած ճամբորդ, հեռուից եկած հեռուն զնացող մի թափառական:

Առանց զարմանալու որ այս ճամբորդը դուռիս փոխարէն պատուհանս է ծեծել, մէկ թափով բաց եմ անում: Ցուրտ քամին վզզում է ն'րս, ճրագս հոգեվարքի մէջ է ընկնում:

— Շո՛ւտ արա, նե՛րս մտիբ, ասում եմ, քամին ճրագս կը հանդցնէ:

Բայց ո՞վ զարմանք, սենեակիս միջից մի ձայն պատասխանում է.

— Ցուրտ է, պատուհանը փակիր:

Մեքենարար պատուհանը փակում ու յետ եմ նայում: Մի նոր եւ աւելի մեծ զարմանք: Սենեակս դատարկ է. այսինքն կրակից, թիկնաթոռից, ճրագից, ժամացոյցից, ինչչոյից ու ինձանից բացի, ոչ ոք: Իմ հեռուից եկած հեռուն զնացող հիւրը անհետացել է: Շատ վրդովուած դրութեան մէջ մօտենում եմ թիկնաթոռին եւ ուշում եմ նստել, երբ հէնց նոյն ձայնը ասում է.

Ներողութիւն պարոն, աթոռը արդէն դրաւում է:

Երրորդ զարմանք, աթոռը դատարկ է, իսկ ձայնը ինձ ասում է որ դրաւում է:

Ջղայնանալով գոչում եմ. — Աթոռը դատարկ է ու ես կը նստեմ:

— Ես արդէն նստած եմ վրան, պատասխանում է ձայնը, շատ էլ հանդիստ աթոռ է:

Թոքերիցս դուրս թռչող «Իու ո՞վ ես» դուռոցը, կոկորդոմս ձայնափոխում է, ու հագիւ թէ մի մղկըտոց է դուրս ծորում բերանիցս...

— Ես ո՞վ եմ, պատասխանում է ձայնը, ես մի յոզնած ճամբորդ եմ, հեռուից եկած, հեռուն զնացող մի թափառական:

Իմանալով որ աթոռս բաղմոզը իմ հիւրն է, սիրտ եմ առնում ու բաւականին վստահ ձայնով պատասխանում.

— Այդ ամէնը դու արդէն ասել ես, ես քո անունն եմ հարցնում, անունդ ի՞նչ է:

— Մարդիկ ինձ շատ տարբեր անուններ են տալիս, դու ինձ քամի ես անուանում, բայց սխալ չհասկնաս, ես հասարակ քամի չեմ, ես դրադէտ քամի եմ. իմանալով որ դու էլ բա-

նաստեղծ ես, ուղեցի հետդ գրականութեան մասին մի քիչ խօսել, դրա համար էլ պատուհանդ ծեծեցի:

Ես պիտէի որ մարդկանց յիսուն տոկոսը գրականութեամբ էր ղբաղւում, բայց երբեք մտքովս չէր անցել որ քամին էլ կարող գրապէս լինել: Սակայն չուզելով հիւրս վիրաւորել ասում եմ.

— Գիշերները քեզ լսելով ես արդէն գիտէի որ գրականութեան մասին էիր խօսում. շատ ուրախ եմ որ եկար այս գիշեր. ես ինձ մենակ էի զգում. բայց ասա տեսնեմ, դու գրականութեան ո՞ր ճիւղովն ես ղբաղւում.

— Ես հեքեաթ եմ գրում, անշուշտ գիտես որ հեքեաթը գրականութեան բարձրագոյն սեռն է. հեքեաթն է որ իր գոյնգոյն պատկերներով, առասպելական անկարելիութիւններով, երազել է տալիս մանուկներին, եւ վերջապէս հեքեաթն է, որ մոռացնել է տալիս դժբան իրականութիւնը, որը վաղը հեքեաթ կը դառնայ:

— Այստեղ նա լռում է, բայց առաջ քան թէ ես կարողանամ մի բառ արտասանել, նա մի անտես տեսրակ է բաց անում (որի շխլ-շխլոցը լսում եմ) եւ սկսում է բարձրաձայն կարդալ:

« ԳԱԶԱՆԸ »

Գիշերները՝ երբ Բենգալի վիթխարի անտառները նիրհում են, ու իրենց անդոհական երազներում զառանցում. երբ լուսինը մի սրս փնտռող բազէի պէս ճախրում է վերը ու իր խոր նայուածքով զննում մրափող երկիրը. երբ նրա արծաթափայլ ճառագայթները մաղուելով ծառերի միջից, լուսաշող մարգարիտներ ենսփռում անտառի թաւուտ գետնի վրայ. երբ գազանների յաղթական ոռնոցը կամ նրանց մահուան մղկըտոցը անտառի խորունկ լռութիւնն են խանգարում. այն ժաանակ ես՝ գիշերային գով քամին, հանդարտ շշնջում եմ ծառերի միջով ու իմ անվերջ ճամբան շարունակելով անցած դէպքերն եմ յիշում, ու յիշածս պատմում:

Գիշերն են ինձ լսել, ու աւելի քիչերը հասկացել. դու որ լսում ես գուցէ հասկանաս...

Հարիւր հազար դարերով եմ ապրել, Ադամի մօրուքն եմ շոյել ու ժամանակի էրեսը ապտակել: Տեսել եմ հյօր թշնամի բանակներ իրար դէմ կանգնած, տեսել եմ նրանց փոշիացած, ու նրանց փոշիները խառնել եմ իրար:

Ես ոչ ոքից վախ ունեմ : Իհնչալի Ռաջան ու նրա ձիերը թամբող ծառան ինձանից միեւնոյն չափ բանիք են ստանում . երբ շոյեմ մէկը, միւսն էլ կը շոյեմ . վաղը երկուսն էլ կը փոշիանան, նրանց փոշիները իրար կը խառնեմ :

Դարերով թափառելով աշխարհի վրայ, շատ հեքեաթներ եմ տեսել, շատերը մոռացել, բայց այս մէկը որ քեզ պիտի պատմեմ երբեք չեմ մոռանալ :

Այս անտառի ափին Բուդդայից հազար տարի առաջ ապրում էր որսորդ Պանդուն, որի արձակած ամէն մի նետը մի կեանք էր անշնչացրել . այդ օրերին Պանդուն վաթսուն տարեկան էր բայց տեսքով երիտասարդ :

Կեանքում նա ոչ ոքի էր սիրել, որսը՝ նրա հաճոյքը, կեանքն ու աշխատանքն էր եղել : Հարուստ էր Պանդուն, նրա որսած դաղանների մորթերը հարստութիւն էին դիզել . բայց նա շարունակում էր որսալ, նա սիրում էր աքիւնաթաթախ վէրքեր տեսնել, սիրում էր տեսնել թաւալուող վիրաւոր դաղաններ . եւ չդիտէր որ ինքն էլ դաղան էր դարձել :

Նա ապրում էր անտառի ափին մի տնակի

մէջ, իր միակ ընկերոջ, իր հաւատարիմ շանը հետ : Ամէն առաւօտ Պանդուն ու իր շունը որսի էին գնում, ու ամէն իրիկուն մի անշունչ գազան քարշ տալով վերադառնում : Այսպէս էր ապրում Պանդուն, ու այսպէս էլ մնաց՝ մինչեւ մի օր . . .

Մի օր, մի առաւօտ, աղեղն ու նետերը ուսին, կարճ ու սուր նիզակը ձեռքը, շանը հետ խաղալով նա անտառ մտաւ : Մինչեւ կէսօր այս ու այն կողմ թափառեց, բայց որսը չերեւաց, ու Պանդուն պատրաստուած էր հանգստանալու, երբ դիմացի թուփերից դուրս խուժեց մի վարազ ու կանու առաւ մի քանի քայլ հեռուն : Հաւատարիմ շունը խկոյն յարձակուեց գաղանի վրայ, որը խոխուաց, յետ-յետ քաշուեց, ու իր հերթին յարձակուեց շան վրայ : Այն ժամանակ Պանդուն բարձրացրեց նիզակը, եւ իր ամբողջ ուժովը նետեց վարազին . սակայն այդ վայրկեանին անակնկալը պատահեց, Պանդուի ձեռքը դողաց, ու նիզակը իր հաւատարիմ շունը դամեց գետնի հետ :

Ողորդ աներեւութացաւ : Եւ Պանդուն գիտցաւ որ նա մի Աստուած էր, որ կերպարանափոխուած եկել էր իրեն իմաց տալու՝ թէ ամէն

կեանք մի կեանք է, հաւասար մի ուրիշ կեանքի...: Պանդուն սոսկումով էր նայում իր իսկ ձեռքով բացած վէրքի վրայ, որից ծորում էր կարմիր արիւնը, եւ որի մէջ թաւալում էր իր հաւատարիմ ընկերը:

Այստեղ նա լուում է ու թեթեւ հալում, որով ճրագս նորից անհանդիստ պլպլում է:

— Է՛հ, ի՞նչպէս էր:

Այս անգամ ես եմ հալում, ըհը՛, ըհը՛, շատ լաւ էր, միտքդ էլ լաւ հասկացայ, ուղում ես ասել որ հաւատարիմ բարեկամներն են միշտ տոնակոխ լինում:

Մի քանի րոպէ լուռ մնալուց յետոյ, եղբայրակում է.

— Ես քեզ բանաստեղծ էի կարծում, մնաս բարով, պատուհանը բա՛ց:

— Բարով եկար:

Պատուհանը բաց եմ անում եւ կրկին փակում: Ի՛նչ տղէտ քամի, իր գրածը ինքն էլ չի հասկանում:

Այս մտածմունքով էլ նստում եմ թիկնաթոռիս վրայ (որը մտերմաբար ճռճում է) ու ձէջոյին նայում: Կրակի մօտ քնած է նա. տեսնես ինչեր է երազում...: Երանի՛ քեզ, ասում

եմ բարձրաձայն, երանի՛ քեզ Ո՛հ էօ, որ գրականութեան մասին վաղափար չունես: Այս բռները հաղիւ եմ արտասանել, որ Ո՛հ էօն արթնանում է, ոտքերի վրայ նստում ու յտակ ձայնով ասում.

— Ի՛նչպէս թէ վրականութեան մասին վաղափար չունեմ, ես մեծ մարդկանց կենսադրութիւն եմ գրելու, իմ յուշերն արդէն գրել եմ:

Այս ասելով նա մի գաղտնի տեղից դուրս է բերում մի կապոց թուղթ ու ձեռքերիս մէջ դնում: Դանդաղօրէն կապոցը բանում եմ ու սկսում կարդալ:

« ԻՄ ԿԵԱՆՔԸ »

«Ես մի շուն եմ, ձախ ոտքս էլ կաղ. եթէ փողոցում ինձ հանդիպես, կարելի է վրաս մի ջար նետես:

Եօթը երկար տարիներ ու մի կաղք, անցել են իմ բազմաշարժար մարմնի վրայով ու նրան թողել անմաղ ու կաղ:

Ես պատին ունեցայ ծնուելու Թեհրան քաղաքում, սովի տարին: Երեք ամսական էի երբ մայրս անհետացաւ: Ընդհանուր կարծիքն

այն էր, որ մարդիկը կերան նրան... : Չվրտեմ թէ ինչպէս դուրս պրծայ սովի ու մարդկանց ճանկերից . բայց դիտեմ որ սովը եւ մարդկանցից շատերը գնացին, ու ես մնացի, ի հարկէ կմախքացած վիճակի մէջ... :

Այդ օրերից մէկում, հանդիպեցի կեանքիս ամենադժբաղդ դէպքին :

Գարնան մի պայծառ օր էր : Ծառերը ծաղկում էին, թռչուններն երգում, ու ես էլ դռնէ դուռ ընկած ուտելու մի բան էի փնտրում, երբ, ո՛վ դարմանք, տասը քայլ հեռու ինձ նայում էր մի մտտո ոսկոր : Տասը քայլը մի քայլ արի ու ոսկորը բերանումս էր : Բայց այդպէսով չվերջացաւ գործը . պէտք էր մի ծածուկ տեղ դտնել . այդ օրերում քաղցած շունները շատ էին, ու հաղիւ էի շուրջս նայել, երբ չորս կողմից յարձակուեցին վրաս : Չսարժենամ, շատ լաւ պաշտպանուեցի, շատերը մինչեւ օրս ապացոյցը կրում են իրենց վրայ . բայց շատ էին, ու նրանից մէկը ոսկորը խից ու փախաւ ամբողջ խումբը հետը տանելով :

Ես շուարած մնացել էի, երբ լսեցի մի դանդի ձայն, յետ նայեցի, բան չտեսայ, դիտեմ

միայն որ օդի մէջ մի քանի պտոյտ կատարեցի, ու մի շատ ծանր բան անցաւ ոստիս վրայով : Վերջը հասկցայ որ մի կառք էր : Միակ միւթարանքս այն էր, որ ոտքս ճզմողը վէղիւրի կառքն էր ու վէղիւրի ծանրութիւնը մեծ դեր էր ունեցել այդ գործողութեան մէջ :

Երեք տարի կաղ ոտքս յետեւիցս քաշ տալով, հասայ վերջապէս կեանքիս ամենէն ուրախ դէպքին : Զմեռ էր . ձիւնն ու խաւարը պատել էին թեհրանը :

Գիշերուայ ժամի տասը հաղիւ կը լինէր, լուռ փողոցներում անցորդներ չկային, ես ու կաղ ոտքս քնելու տեղ էինք փնտրում . երբ յիշեցի, որ քաղաքից դուրս մի անդուռ խրճիթ կար, ուր հաւաքում էին դէրվիշները :

Թէեւ դիշերները քաղաքի հսկայ դռները փակ էին, բայց դիտէի նաեւ, որ քիչ հեռուն պատերի մէջ այնպիսի մեծ ծակեր կային, որ Շահնշահի բանակն անգամ կարող էր նրանց միջով տողանցք կատարել :

Այս ամենքի մասին մտածելով, վրուխս կախ ընդնդալով դնում էի, երբ ոտքի ձայներ լսեցի ու նայեցի վեր . մի քանի քայլ հեռու, կանդնած

էր մի մարդ. նա էլ ինձ էր նայում : նա սկսեց  
չւսցնել ու ձեռքովը կանչել :

Ես զարմացայ նախ, ապա մտածեցի որ այս  
մարդը կամ խենթ է, կամ հարբած. փողո-  
ցում մի շան հանդիպել, քար չնետել, աքացի  
չհասցնել, այս խենթի կամ հարբածի գործ էր :

Ինչ եւ իցէ, պոչս հանդարտ շարժելով մո-  
տեցայ նրան. նա գլուխս շոյեց, մի կտոր հաց  
տուեց ու շարունակեց իր ճամբան :

Ես նրան հետեւեցի ու հետեւում եմ մին-  
չեւ այսօր ...» :

Խէչօն, սենեակիս լուռթիւնը խանդարում  
է, հարցնելով .

— Էհ, ի՞նչպէս էր :

— Արժէք չունի :

— Ինչո՞ւ :

— Որովհետեւ դու մի շուն ես :

## ՄՆԱՍ ԲԱՐՈՎ

Առ Տ. Մ .

Շատ անգամներ ժիր ժպտալով  
Արտասանել եմ հեզնօրէն,  
«Բարի՛ եկար, մընաս բարով»՝  
ձամբիս վըրայ չըգաս նորէն :

Այժմ սակայն պարտուած հոգով,  
Դողդողալով յուզումներէս,  
«Բարի եկար, մնաս բարովն»  
Սըրտէս բըխած օրհնեմք է քեզ :

Մընաս բարով, մընաս բարով, —  
Մի՛ մոռանար իմ սիրտն ու սէր .  
Բայց թէ թախծիս ինձ յիշելով՝  
Ա՛հ, մոռացիր, դու այն ատեն ...

## ՀԱՄԲՈՐԴԻ ԵՐԳԸ

Համբան երկա՛ր, օձապըտոյտ .  
Վերը արեւ ու ժիբ արտոյտ,  
Վերը զանգակ, ցնծութեան երգ՝  
Լոյսն իբրեւ կոյս պարում է մերկ ...

Համբան բարակ, կորաբամակ,  
Մառերի զով ստուերի տակ : —  
Եւ լուսահեղձ ձորակն ի վար  
Աղբիւրի երգը զովարար :

Համբան անվե՛րջ, շուքիս նըման՝  
Մերթ ետ, առաջ գալիս է ման,  
Համբան ուրա՛խ, համբան տըխո՛ւր,  
Որ տանում է — ա՛վ գիտէ ա՞ւր ...



1000

Այս գրքոյկէն տպուեցաւ միայն  
500 քուագրեալ օրինակ  
1989-ի Օգոստոսին  
Միսիթարեան տպարանին մէջ  
Վեներիկ

№ 292

«ՄԱՏԵՆԱՇԱՐ ԱՐԴ»  
KAZANDJIAN ZOULAL  
61, Rue de Rochechouart  
75009 PARIS - FRANCE

« Ազգային գրադարան »  
  
NL0384008

36977